

փոքրիկ տաղն, զոր Կ. Կոստանեանց 1623ին գրուած Սաղմոսարանի մը մէջ գտած հրատարակած է¹: Վախճանած է Յովսէփ 1544ին մեծ սուգ թողլով Ջաքարիայի: Շատ անձուկ կապերով զօդուած կը թուի Ջաքարիա իւր ուսուցչին հետ, իր մէկ ոտանաւորին մէջ կ'անուանէ զանի «վարդապետ սխրալի, Տէր Յովսէփ Աղթամարցի»: Առ սա ուղղուած կ'ենթադրեմ 1538ին յօրինուած «Ջօրք անմարմնոցն» տաղը: Յովսէփ եղած է նաեւ աշակերտակից (կամ թերեւս վարդապետ իսկ), ինչպէս կ'երեւայ, Գրիգոր Ա. Աղթամարցւոյ, որ նուիրած է առ իւր սրտակիցն յամի 1524 տաղ մ'ալ սկզբնաւորութեամբս՝ «Գովեալ սուրբ հայր ոմն յարակայ»², որուն տներու սկզբնատառք կը յօդեն «ԳՐԻԳՈՐԻՍԷ», եւ վերջատառք «ՅՈՎՍԵՓԻՆ Է», շատ նման Ջաքարիայի վերոյիշեալ տաղին, որ նմանութիւն մ'է լոկ ասոր:

Եսայի վարդապետի մասին տեղեկութիւն կը պակսի մեզի, իրեն համար օրինակած է Ջաքարիա Հռոմ Աղեքսանդրի վարուց պատմութիւնն ընտիր գրչութեամբ³:

1 «Ի Յովսէփ վարդապետէ Աղթամարցւոյ ասացեալ Երկու մեաս կայ ահագին» եւն սկզբնաւորութեամբ, ընդ ամենն 8 տող. հրատ. Նոր Ժողովածու, Գ. Վաղարշապ. 1903, էջ 42:

2 Թ. 684, Թ. 18ա—19ա Մատենադարանիս: Այլուստ անձանօթ է ցայսօր տաղս:

3 Հ. Աւետիսի, Այրարատ, 268, կ'իմանայ Հոս զԵսայի Նշեցի, ոչ ուղղութեամբ, ինչպէս նկատած է եւ Հ. Տաշեան՝ անդ, էջ 90 եւ 126: